ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի ներկայացուցիչների՝ 2024 թվականի հոկտեմբերի 6-ից 8-ն ընկած ժամանակահատվածում Բելգիայի Թագավորություն գործուղման արդյունքների վերաբերյալ

1. Մասնակիցների անուն, ազգանուն և զբաղեցրած պաշտոնը.

▪ Աննա Կոստանյան – Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի (այսուհետ՝ **Հանձնաժողով**) համակենտրոնացումների, պետական օժանդակության գնահատման և շուկաների վերլուծության վարչության համակենտրոնացումների և պետական օժանդակության գնահատման բաժին բաժնի պետ.

▪ Սեդա Ոսկանյան – Հանձնաժողովի իրավաբանական վարչության վարչական վարույթների և դատական ներկայացուցչության բաժնի պետ:

2. Գործուղման վայրը և ժամկետները.

Բելգիայի Թագավորության Բրյուսել քաղաք, 2024 թվականի հոկտեմբերի 6-8-ը:

3. Հրավիրող կողմը.

Եվրոպական հանձնաժողովի մրցակցության հարցերով գլխավոր տնօրինություն:

4. Գործուղման նպատակը.

Մասնակցություն «Մրցակցության և պետական օժանդակության վերաբերյալ ԵՄ օրենսդրությունը» թեմայով վերապատրաստման երկօրյա դասընթացին:

5. Գործուղման արդյունքները.

Դասընթացի առաջին օրը նվիրված է եղել պետական օժանդակության վերաբերյալ ԵՄ-ը օրենսդրությանը:

Դասընթացի առաջին կեսում ներկայացվել է պետական օժանդակության հասկացությունը, տարրերը, գնահատման մեթոդաբանությունը և զարգացման ընթացքը Եվրոպական միությունում:

Քննարկման արդյունքում պարզվել է, որ ի տարբերություն ՀՀ գործող օրենսդրության, որի համաձայն՝ պետական օժանդակության առկայությունը ինքնին չի ենթադրում դրա արգելված լինելը, ԵՄ-ում պետական օժանդակության տարրերի միաժամակյա առկայության փաստի արձանագրման պարագայում օժանդակությունը համարվում է արգելված:

Քննարկման երկրորդ մասում դիտարկվել են տարածքային համաչափ զարգացման նպատակով տրամադրվող օժանդակությունների գնահատման առանձնահատկությունները՝ պրակտիկ փորձի օրինակով:

Դասընթացի երկրորդ օրը նվիրված է եղել համակենտրոնացումներին և հակամրցակցային համաձայնություններին: Մասնավորապես՝ քննարկման առաջին մասում ներկայացվել է հակամրցակցային համաձայնություններին վերաբերող փորձը: Քննարկվել են հակամրցակցային համաձայնությունների տեսակները, դրանց բացահայտման գործիքակազմը և անհրաժեշտ տեղեկատվության ձեռքբերման աղբյուրները:

Քննարկման երկրորդ մասում ներկայացվել է ԵՄ-ի փորձը համակենտրոնացումների գնահատման շրջանակներում՝ վնասի տեսությունը, համակենտրոնացման ձևերը, գնահատման շրջանակներում շուկայի ուսումնասիրությունը, ուսումնասիրության արդյունքում ընդունվող հնարավոր որոշումները, ինչպես նաև պայմանով համակենտրոնացումների թույլատրման պարագայում կիրառվող պայմանները:

6. Առաջարկություններ և գործուղման արդյունքում ձեռք բերված պայմանավորվածությունները.

Դասընթացի մի շարք մասնակիցների հետ ձեռք է բերվել համագործակցության պայմանավորվածություն, մասնավորապես՝ համակենտրոնացումների, պետական օժանդակության և հակամրցակցային համաձայնությունների առնչությամբ հետաքրքրական օրենսդրական փոփոխությունների, դրանց առնչությամբ վարույթների և դրանց արդյունքում ընդունվող ոոշումների վերաբերյալ փորձի փոխանակման և այլ տարբերակներով:

Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի
համակենտրոնացումների, պետական
օժանդակության գնահատման և շուկաների
վերլուծության վարչության
համակենտրոնացումների և պետական
օժանդակության գնահատման բաժնի պետ Աննա Կոստանյան

Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի
իրավաբանական վարչության վարչական
վարույթների և դատական ներկայացուցչության
բաժնի պետ Սեդա Ոսկանյան